05.10.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան ուսուցիչներ

Կրթության բնագավառի ներկայացուցիչներ,

Ակնածանքով և երախտագիտության մեծ զգացումով շնորհավորում եմ Ձեզ՝ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Տոնը պատեհ առիթ է՝ միավորելու մեր զգացողությունները, հղելու շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ, կրկին կարևորելու դպրոցապահպան գործի նվիրյալների դերը քաղաքացու ու անհատի ձևավորման գործում:

Ինչքան էլ հարափոփոխ լինի կյանքը, զարգանան տեխնոլոգիաները, միևնույն է, դպրոցի սյուները եղել և մնում են ուսուցիչները, որոնց դերը առաջնահերթ է ու գերակա:

Անշուշտ, ուսուցչի աշխատանքի լավագույն գնահատականը տալիս են սաները, որոնք իրենց գիտելիքներով և իմացությամբ քննություն են բռնում կյանքում:

Ամենակարևոր դասն էլ, որ մեր մանկավարժները տվել ու տալիս են իրենց սաներին, հայրենապաշտության և հայրենասիրության դասերն են, որոնք մեր մեջ կրում և որոնցով առաջնորդվում ենք ողջ կյանքի ընթացքում:

Ուսուցչի օրը չի սահմանափակվում հոկտեմբերի 5-ով. յուրաքանչյուր բացվող օր դպրոց ու դասարան մտնող աշակերտին դիմավորող ուսուցիչները, որոնք դպրոց պահող ու լավագույն ավանդույթներ շարունակողներն են, ապացուցում են այն պարզ ճշմարտությունը, որ բոլոր ճանապարհներն անցնում են դպրոցով և յուրաքանչյուրի ուղեկիցն են իրենք:

Ուսուցչի աշխատանքն առաքելություն է և մեծ պատասխանատվություն: Կիրթ ու գիտակից սերունդ ունենալու ճանապարհի սկզիբը դպրոցում է, մեր երկրի ապագայի հիմքերն այստեղ են դրվում, որի ակունքներում ուսուցիչն է՝ իր ամենօրյա նվիրյալ ու պատվախնդիր աշխատանքով:

Այս տոնական պահին առանձնակի սիրով ցանկանում եմ շնորհավորել մեր ավագ սերնդի մանկավարժներին, նրանց, որոնք տասնամյակներ շարունակ կրթել են սերունդներ, անցել են վաստակած հանգստի, սակայն իրենց թողած ձեռագրով և կենսափորձով լավագույն օրինակ են երիտասարդների համար, նրանց, որոնք այսօր էլ շարունակում են իրենց աշխատանքը՝ օրինակ դառնալով կրտսեր գործընկերների համար:

Հարգարժան ուսուցիչներ

Դուք ոչ միայն շարունակում եք մանկավարժական մեծ համայնքի լավագույն ավանդույթները, այլ նաև աշխատում եք ժամանակի պահանջներին համահունչ, ձեր ազգանվեր առաքելությանը հավատարիմ:

Շնորհավորանքի խոսքերս եմ հղում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակներին և մանկավարժներին:

Մանկակրթման և դաստիարակման, հայապահպանման ու հայրենասիրության սերմանման բարդ ու պատվաբեր գործի ակունքներում եք դուք և ձեր կոչմանն հավատարիմ՝ ապահովում եք մեր երեխաների նախադպրոցական կրթությունն ու դաստիարակությունը:

Ուսուցչի օրվա առթիվ շնորհավորում եմ Սևանի բազմագործառութային քոլեջի դասախոսներին, մանկավարժներին, որոնք կոչված են իրականացնելու շատ կարևոր առաքելություն:

Շնորհավորանքներս եմ հղում արտադպրոցական հաստատությունների խմբավարներին և դասատուներին, որոնք իրենց կարևոր և պատասխանատու աշխատանքի շնորհիվ ձևավորում են վաղվա քաղաքացուն:

Հարգարժան ուսուցիչներ

Բարդ ու հարափոփոխ, մարտահրավերներով լի այս ժամանակահատվածում, երբ վերաձևակերպվում են շատ արժեքներ, ցանկանում եմ, որ դուք ձեր ներկայությամբ ու աշխատանքով դառնաք մեր արժեքների մեծագույն պահապանը՝ կրթությունը դարձնելով բացարձակ արժեք:

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից ևս մեկ անգամ շնորհավորում եմ այս գեղեցիկ տոնի առթիվ, շնորհակալություն եմ հայտնում ձեր պատվախնդիր աշխատանքի, անմնացորդ նվիրումի համար:

Մաղթում եմ ուժ և եռանդ, առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն և լավատեսություն, խաղաղ ու անվտանգ պայմաններում ապրելու, աշխատելու հնարավորություն:

Շնորհավոր տոնդ, Ուսուցիչ